Իրանահայ տպագրություն

Դոկտոր Էդիկ Բաղդասարյան
/Կանադա/

Խաչատուր վրդ. Կեսարացին, համարվում է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի արժանավոր ու ժրաջան առաջնորդներից մեկը, որը թեեւ հետագայում եպիսկոպոսական աստիճան է ստանում, սակայն մեր գրականության մեջ հիշվում է վարդապետական աստիճանով։

Կեսարացին՝ 1620 թվականից առաջ, Մովսես կաթողիկոսի կոնդակով, որպես նվիրակ, գնում է նոր Ջուղա։ Լինելով գործունյա եւ եռանդուն երիտասարդ հոգեւորական, ի նկատի ունենալով Ն. Ջուղայի թեմի առաջին առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոսի ծերությունն ու տկարությունը, Կեսարացին 1620 թվականին ստանձնում է առաջնորդական պաշտոնը եւ զարկ տալով տեղի կրթական գործին՝ նոր շունչ ու եռանդ է բերում Ջուղայի հայությանը։

Կեսարացին՝ որպես նվիրակ 1630թ. անցնում է Լեհաստան եւ Եվրոպայում ծանոթանում գրքերի տպագրությանը, ուստի Նոր Ջուղա վերադառնալով, լծվում է հայերեն գրքերի տպագրության դժվարին գործին։

Տպարանի ստեղծման գործերը սկսվում են 1636 թվականին, որին մասնակցում են վանքի ողջ միաբանությունը։ Նրանք տնային միջոցներով պատրաստում են մամուլ, թուղթ, մելան, տառեր եւ ձեռնարկում են տպագրության գործը գլուխ բերելու։ Այդ աշխատանքները տեւում են մեկ տարի եւ հինգ ամիս, եւ 1638 թվականին տպագրվում է Նոր Ջուղայի առաջին գիրքը՝ «Սաղմոս»-ը։

Խաչատուր Կեսարացու տպարանում տպագրվել են չորս գիրք, հետեւյա կարգով.[1]

1«Սաղմոս ի Դավիթ», 1638թ.

2-«Հարանց Վարք», 1641թ.

3-«Խոհրդատետր», 1641թ.

4-«Ժամագիրք ատենի»,1642թ.

[1] - Լ. Գ. Մինասյան. Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը. Ն. Ջ., 1972թ., էջ 16։



Առաջին տպարանից տառաշար կաղապարների նմոյշներ



Առաջին տպարանից տառատեսակներ

Ս. Ամենափրկչյան վանքի առաջին տպարանի մնացած տառատեսակներից

«Սաղմոս ի Դավիթ» գիրքը, մինչեւ 1968թ. անծանոթ էր ու անհայտ։ Նրա միակ օրինակը գտնվում է Օքսֆորդի համալսարանի **Բոդլիը**ն գրադարանի (Bodleian Library) հայկական բաժնում[2]։

---

[2] - Գիրքը հայտնաբերվել է 1968թվականին, գրադարանի արեւելյան բաժնի վարիչ պր. Դեյվեդ Բարրետտի կողմից։
Նոր Ջուղայում տպագրության գործը 1638 թ. սկսվելու մասին հիշված է նաեւ Կալկաթայում տպագրված 1846 թվականի օրացույցի մեջ (էջ 23), ուր □Համառօտ ժամանակագրութիւն□ վերնագրի տակ ասված է. □Սկիզբն տպագրութեան հայոց ի Նոր Ջուղայ, ձեռամբ Խաչատուր եպիսկոպոսի 1638□։


1638 թ· տպագրուած
«Սաղմոս»ի առաջին էջը

1638թ. տպագրված □Սաղմոս□ի առաջին էջը

Գիրքն ունի շուրջ 250 էջ 15.2X8.5 սմ. ծավալով շարվածք։ Զուրկ է անվանաթերթից։ Առաջին էջի վերեւում ունի մի ճակատազարդ, որի ներքեւում որպես խորագիր գրված է «Սաղմոս ի Դավ(ի)թ»։

Մեծատառերը տպված են երկաթագրերով, իսկ որոշ գլխատառեր՝ հավքագրերով[3]։

«Հարանց Վարք»-ը (1641թ.) հոգեւոր հայրերի՝ ճգնավորների կյանքն ու մի շարք մոլությունների ու խրատական գրվածքների ժողովածու է, եւ իր տեսակի մեջ մի կոթողական գործ է, նորահիմն մի տպարանի համար։

[3] - Ռաֆֆի տարեգիրք. 1970թ., էջ 305։

«Հարանց Վարք»ի բուն պատմութեան սկիզբը

«Հարանց Վարք»ի առաջին էջի «Ցանկը»

Գրքի ծավալն է 24.5X8.5 սմ., շարվածքը՝ 17X12.5 սմբ.: Ունի 705 էջ, երկսյունակ տպագրություն: Էջերը համարակալված են հայկական թվանշաններով՝ Ա-ՉԵ (1-705)[4]:

«Խորհրդատետր»-ը կամ «Պատարագամատոյց»-ը Խաչատուր Կեսարացու տպագրված երրորդ գիրքն է (1641թ.): Գիրքը վաղուց ծանոթ է եղել հայ բանասերներին, սակայն հայտնաբերվել ու լրիվ նկարագրվել է 1960-ական թվականներին: Գիրքը բաղկացած է 48 էջերից եւ համարակալված է հայկական թվանշաններով՝ Ա-ԽԷ (1-47), էջ 44 եւ 45 միջեւ ընկած էջը համարակալված չէ: Գրքի ծավալն է 17X12.5 սմ.[5]:

[4] - Լ. Գ. Մինասյան. նշվ. աշխ., էջ 22:
[5] - Նույն տեղում. էջ 25-26:



«Խորհրդատետր»-ի առաջին էջը

1641թ. «Խորհրդատետր»-ի առաջին էջը

«Ժամագիրք ատենի»-ն կամ իր ընդարձակ խորագրով՝ «Սաղմոսացն Դավթի եւ կարգավորութիւն հասարակաց աղոթից եկեղեցեացոց Հայաստանեաց» գիրքը տպագրվել է 1642թ.: Այստեղ աշխատանք է տարվել խոշորացնելու տառերը: Գիրքը պարունակում է 695 էջ, որոնք համարակալված են հայկական թվանշաններով Ա-ՈՂԴ (1-694 եւ չհաշված 1): Շարվածքի ծավալն է 13Х17: Սաղմոսն սկսվում է մոռացությամբ մի չհամարակալված էջից[6]:

[6] - Նույն տեղում. էջ 28:

Մի էջ «Ժամագիրք Ատենի» գրքից

Ջուղայի տպարանը զարգացնելու եւ լավ ու նոր հիմքերի վրա դնելու համար, Խաչատուր Կեսարացին, առաջին գրքի տպագրությունից հետո իր աշակերտներից մեկին՝ Հովհաննես վրդ. Քթրշենցին ուղարկում է Եվրոպա, տպագրական անհրաժեշտ աշխատանքներին ծանոթանալու եւ նոր գիտելիքներով ու մամուլով վերադառնալու համար։ Նա ամբողջ յոթ տարի՝ 1639-1646թթ. շրջում է Եվրոպայի զանազան երկրներ՝ Վենետիկ, Հռոմ եւ այլուր եւ կանգ է առնում Լիվոռնո քաղաքում, ուր 1644թ. տպագրության է հանձնում «Գիրք եւ Սաղմոսք Դավթի որ եւ Սաղմոսարան կոչի» գրքույկը եւ ուղարկում իր ուսուցիչ Խաչատուր Կեսարացուն։

Հովհաննես վարդապետը 1646 թ. վերադառնում է Նոր Ջուղա՝ իր հետ բերելով Մամուլ ու տառեր։ Սակայն իր ուսուցիչն արդեն վախճանվել էր։ Նա 1647-50 թվականներին տպագրում է երեք անուն գիրք։ Նրա Եվրոպայից բերած մամուլից կամ տպագրական է երեք անուն գիրք։ Նրա Եվրոպայից բերած մամուլից կամ տպագրական պարագաներից, այժմ մնում են միայն տառերի մայրեր եւ մի շարք պղնձյա քլիշեներ։

Հովհաննես վարդապետը, հեռանալով Նոր Ջուղայից, մեկնում է Սբ. Էջմիածին եւ եպիսկոպոս ձեռնադրվում, ուստի տպագրական գործը Նոր Ջուղայում դադարում է մինչեւ 1687թ.։ Ստեփանոս առաջնորդի ժամանակ, Առաքելական եւ Կաթոլիկ եկեղեցիների միջեւ խիստ վեճ եւ անհամաձայնություն է ծագում, ուստի կրկին կարգի

է բերվում Հովհաննես վարդապետի Եվրոպայից բերած մամուլը եւ տպագրվում երեք գիրք։

Դրանից հետո, Վանքի տպարանը շուրջ երկու դար (184 տարի) փակ մնալուց հետո, կրկին աշխատանքը սկսում է 1872թ.։ Տպարանի երրորդ մամուլը նվիրում է ջուղայեցի վաճառական ջավաբնակ Մանուկ Հորդանանյանը 1844թ. (աղջկանց դպրոցի հիմնադիրը)։ Այն օգտագործվում է մինչեւ 20-րդ դարի սկիզբները, որից հետո, որպես մաշված ու հնացած մամուլ, դրվում է պահեստ։

Նոր Թանգարանի կառուցումից հետո, այժմ այն դրվել է ցուցադրության։ Պատրաստված է 1841թ. եւ կոչվում է «Արծիվ»։

1904 թ. Թումանյան եղբայրների Առեւտրական տունը, իրենց հանգուցյալ եղբոր՝ Հովսեփ Թումանյանի հիշատակին, Վանքի տպարանին նվիրում է ժամանակակից արդիական մամուլ, իր բոլոր հարմարություններով։ Այն աշխատում է մինչ օրս։



1844 թ. Մանուկ Հորդանանյանի նվիրած մամուլը

1971 թ. հոկտեմբին, տիկ. Վիկտորիա Շահբազյանը, իր միակ որդու հիշատակին տպարանին նվիրեց գերմանական «Հայդելբերգ» մակնիշի ինքնաշխատ արդիական մամուլ։ Իսկ նրա եղբոր՝ Սարգիս Մարտինի կողմից տպարանին նվիրվեց արդիական մի կտրիչ մեքենա[7]։

Այսպեսով, Նոր Ջուղայի հայկական տպարանը դարձավ առաջինն ամբողջ Իրանում եւ միջին Արեւելքում, իսկ աշխարհում՝ 7-րդը։

[7] - Նույն տեղում. էջ 60-65։

1-Վենետիկ 1512
2-Կ. Պոլիս 1567
3-Հռոմ 1584
4-Լվով 1616
5-Միլան 1621
6-Փարիզ 1633
7-Նոր Ջուղա 1636
8-Լիվոռնո 1643
9-Ամստերդամ 1660
10-Մարսել 1673
11-Զմյուռնիա 1676
12-Լայպցիգ 1680
13-Պադուա 1690
14-Լոնդոն 1736
15-Էջմիածին 1771 (առաջինը Հայաստանում)
16-Մադրաս 1772
17-Տրիեստ 1776
18-Պետերբուրգ 1781
19-Նոր Նախիջեւան 1786
20-Աստրախան 1796
21-Կալկաթա 1796
22-Բոմբեյ 1810
23-Վիեննա 1812
24-Մոսկվա 1820
25-Թիֆլիս 1823
26-Շուշի 1828
27-Երուսաղեմ 1833
28-Պարտիզակ 1848
29-Շամախի 1856
30- Նյու Յորք 1857
31-Վան 1858
32-Թեոդոսիա 1859
33-Մանչեստր 1863
34-Մուշ 1863
35-Կահիրե 1865
36-Սեբաստիա 1871
37-Բաքու 1872
38-Գանձակ 1874
39-Ռոստով 1875

40-Երեւան 1876
41-Ալեքսանդրապոլ 1876
42-Ֆոքշան 1877
43-Եվդոկիա 1883
44-Վառնա 1884
45-Ալեքսանդրիա 1888
46-Ախալցխա 1888
47-Թավրիզ 1889
48-Նոր Բայազետ 1890
49-Ժնեւ 1891
50-Ռուսչուկ 1891
51-Աթենք 1892
52-Թեհրան 1894
53-Բոստոն 1899[8]

Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի տպարանում 1636-1972 թթ. ընթացքում լույս են տեսել 396 անուն գիրք ու գրքույկներ, որոնց կարելի է բաժանել վեց խմբերի.

1-գիրք ու գրքույկ
2-օրացույց
3-տեղեկագիր
4-կանոնադրություններ
5-պարբերականներ
6-զանազան

Գրքեր օրինակ՝ «Հարանց Վարք», «Աստվածաշունչ» եւ այլն, իսկ առաջին օրացույցը տպագրվել է 1863 թվականի համար, (տպագրված 1862թ.) Տեր Դիոնիսիոս Տեր Եղիազարյանի ձեռքով։ Ապա 1878 թվականից, հաջորդաբար լույս են տեսել վանքի օրացույցները, այդ ընթացքը ընդհատվել է 1893-1897 թթ. եւ 1939-1944թթ. երկրում տիրող աննպաստ պայմանների հետեւանքով։ Մինչ 1972 թ. օրացույցների թիվը հասնում է 84-ի։ Վանքի տպարանում տպագրվել են զանազան տեղեկագրեր, սակայն հաջորդականությամբ տպագրվողները եղել են «Տարեւոր Տեղեկագիր» (1880-1930թթ.), Նոր Ջուղայի ազգային հաստատությունների «Տարեկան հաշիվ»-ները 1893-1926 թթ. եւ «Ազգային դպրոցների տեղեկագիր» 1899-1917 թթ.։ Տպարանում հաճախակի տպագրվող գրքերից էին կանոնադրությունները։

Վանքի տպարանում տպագրված առաջին պարբերականը «Նոր Ջուղայի լրաբեր»-ն է, որ լույս է տեսել 1904-1908թթ. Թեմի առաջնորդական փոխանորդ Բագրատ վրդ. Վարդազարյանի խմբագրությամբ։ Հրատարակվել է 45 համար։ Այստեղ է տպագրվել նաեւ Նոր Ջուղայի «Բոյ սկաուտ» միության «Ընկեր ամսագիրը» 1920թ., որից լույս է տեսել միայն երեք համար. Ջուղայում տպագրվել են նաեւ վիմատիպ ամսագրեր։

---

[8]- اسماعیل رایین. اولین چاپخانه ایران. تهران: 1347، ص 17.

Բացի վերոհիշյալ առարկաներից, այստեղ տպագրվել են զանազան հայտարարություններ, կոնդակներ, ծանուցումներ, ազդեր, ստացագրեր, հրավերագրեր, այցեքարտեր եւ այլն[9]։

Նոր Ջուղայում աշխատել են նաեւ այլ հայկական տպարաններ, նրանք են «Լազարիստ» եւ «Ստեփանեան» տպարանները։ Վերջինս պատկանում էր դոկտ. Հովհաննես Ստեփանյանին եւ եղբայրներին, որը հավանաբար աշխատել է 1945 թվականից եւ շարունակել է «Լազարիստ» տպարանի գործը։

Նոր Ջուղայի տպարանը դեռեւս 1904 թվականից ունեցել է նաեւ պարսկերեն ու լատիներեն տառեր[10]։

Նոր Ջուղայի Վանքի տպարանում տպագրված գրքերը՝ Հ. Տեր Հովհաննիսյանի «Պատմութիւն Նոր Ջուղայի» (հ. 1-2, 1880-1881), Ա. Աթայանի «Սալմաստ» (1906), «Փերիաի Աշուղները» (1964), Է. Մանճիկյանի «Հովհաննես կաթողիկոս Օփեցի» (1967), Հ. Ալահվերդյանի «Դեւ (Մարգար Ղարաբեգյան) եւ իր պոեզիան» (1972) եւ այլ աշխատությունները հատուկ արժեք են ներկայացնում։ 1979 թվականից հետո տպագրվել են հարյուրավոր գրքեր՝ հայերենով եւ պարսկերենով, հայոց պատմության եւ մշակույթի մասին։

Սպահանի պարսկական տպարաններից «Դադ» տպարանում եւս տպագրվել են մի քանի հայերեն գրքեր, ինչպես եւս մի քանի տարի վանքի եկեղեցական օրացույցը, Նոր Ջուղայում տպագրվել են նաեւ մի քանի այլ գրքեր, որոնց տպարանն անորոշ է։

Նոր Ջուղայում տպագրված գրքերի թիվը (1638-2000թթ.) եղել է 381 անուն գիրք։

Թավրիզի տպարանները

Ինչպես արդեն հիշատակվել է, Թավրիզում եւս եղել են մի քանի տպարաններ, հայկական եւ ոչ հայկական, որոնցում տպագրվել են հայերեն գրքեր։

Այդ տպարաններից առաջինը եղել է «Արամյան» դպրոցի տպարանը, որը հիմնվել է 1888 թվականին, որին հետո թերեւս փոխարինել է Ատրպատականի Հայոց Թեմականի կամ Առաջնորդարանի տպարանը։

Թավրիզում որոշ շրջանում գործել են նաեւ «Իրան», «Փարոս» եւ այլ տպարաններ, որոնց մասին շատ բան չգիտենք։

Հրաչյա Աճառյանը իր «Կյանքիս հուշերից»[11] գրքի մեջ հիշատակում է, որ Ատրպետը Թավրիզում ուներ մի տպարան, ուր տպագրում էր իր գրքերը։ Ատրպետի գրքերը տպագրվել են «Ատրպատականի թեմական տպարան»-ում, մեր կարծիքով հենց նույն տպարանն է, որն Աճառյանը վերագրել է Ատրպետին։

«Իրան» տպարանի ում պատկանելը չգիտենք, բայց «Փարոս»-ը, ըստ երեւույթին, պատկանել է Մելքոն Շահբազյանին։

---

[9] - Լ. Գ. Մինասյան. նշվ. աշխ., էջ 69-71։
[10] - Լ. Գ. Մինասյան. նշվ. աշխ., էջ 144։
[11] - Կյանքիս հուշերից. Երեւան, 1968թ. էջ 288։

Թավրիզի «Արամեան դպրոց»-ի տպարանը, օրվա Առաջնորդ Ստեփանոս արքեպ. Մխիթարյանի դիմումին ընդառաջելով, նվիրել է մոսկվայաբնակ Հովհաննես Հովնանյանը 1888 թվականին, որով կառուցվել է երկու սենյակով մի տպարանի շենք, որի ճակատին տեղադրվել է մի մարմարե քար, հետեւյալ արձանագրությամբ։

«1889 ամի տեառն ՌՅԼԸ- Հայոց կառուցան հիւսիսակողմն շինուածն Առաջնորդարանի ուր եւ զառաջին հաստատեցաւ հայկական տպարան ընծայեցեալ ազնուական Աղա Յովհաննիսէ Ս. Հովնանեանց բնակիչի Մոսկուա քաղաքի, ջանիւք եւ աշխատութեամբ Առաջնորդ վիճակին Հայոց Ատրպատականի Տ. Ստեփանոսի Արիի եպիսկոպոսի Մխիթարեան Շիրակացւոյ»[12]։

Թավրիզում եղած մյուս տպարաններն են՝ «Իրան», «Ումիդ», «Սաադետ» եւ «Փարոս», որոնցում տպագրվել են հայերեն գրքեր։

Այնտեղ եղել է նաեւ մի «Եղբայր Գորոյեանց վիմագրատուն», որտեղ 1889 թվականին տպագրվել է «Բողոք» խորագրով 16 էջանոց մի փոքրիկ գրքույկ[13]։

Ստորեւ բերում ենք օրինակներ այդ տպարաններում տպագրված գրքերի ցանկը, ըստ տարիների.

Արամյան դպրոցի տպարան

1-Ստորագրութիւն հռչակաւոր Վանաց Ս. Գէորգայ որ ի (Մուղնի), 1889թ.

2-Կանոնադրութիւն հակալկոլական ընկ. Պարսկաստանի

Դավրեժ 1900թ. տպարան Թավրիզու հայոց Արամյան դպրանոցի, էջ՝ 5, ծավալ՝ 11.2X17.8 սմ.

3-Տեղեկագիր եւ հաշուեկշիռ 1900-1901 տարեշրջանի Թավրիզի Հայ Բարեգործական Ընկերութեան

Դավրեժ 1901թ. տպ. Արամյան դպրոցի, էջ՝ 20, ծավ. 15X20 սմ.

Ատրպատականի հայոց թեմական տպարան

1889

1-Ստորագրություն հռչակաւոր վանաց սբ. Գեորգայ որ ի Մուղնի

Ստեփանոս եպիսկ. Մխիթարյան Շիրակացվոյ Դավրեժ 1889թ. Հառաջնորդական տպարանի Հայոց էջ՝ 40, ծավալ 15X21 սմ.

1890

2-Ալմաստ

Ատրպետ

Թավրիզ 1890թ. տպ. Ատրպետ. հայոց թեմական էջ՝ 348

3-Հոգի եւ Մարմին

---

[12] - «Պատմութ. Արամեան դպրոցի». էջ 83-84։

[13] - Թեմականի տպարանում տպագրվել են նաեւ պարսկերեն գրքեր՝ թարգմանված հայ գրականությունից։

Ալեքսանդրի Բեն

ռուս. թարգմ. Ստեփ. եպսկ. Մխիթարյան Շիրակացի նվիրված բժ. Կարապետ Մխիթարյանի հիշատակին Դավրեժ. տպ. Առաջնորդարանի 1900թ. էջ՝ 138+10 ծավ. 16X21.5 սմ.

1903

4-Ատրպատականի հայոց հիմնական եւ Հայաստանեայց եկեղեցու ծխական կանոնադրութիւն

Թավրիզ, 1903թ. տպ. արագատիպ Թեմականի Հայոց Ատրպատականի, հիշատակ Վաղամեռիկ Եղիսաբեթ Միրզաբեկյանի

էջ՝ 66+8+4, ծավ. 11.5X17 սմ.

1904

5-Դիմակներ

Ատրպետ

Թավրիզ 1904թ. Ատրպ. Թեմ. տպարան էջ՝ 168

ըստ Լ. Գ. Մինասյանի կազմած մատենագրության ցանկի, Թավրիզի տպարաններում հրատարակվել են հետեւյալ թվով գրքեր. (սկզբից մինչ 2000թ.)[14]

1-Արամյան դպրոցի տպարան	3 անուն գիրք
2-Ատր. Հայոց Թեմի թեմական տպարան	64 անուն գիրք
3-Իրան տպարան.	7 անուն գիրք
4-Ումիդ տպարան	1 անուն գիրք
5-Սաադեթ տպարան	1 անուն գիրք
6-Փարոս տպարան	9 անուն գիրք
7-Վիմագիր տպարան	2 անուն գիրք
8-անորոշ տպարան	1 անուն գիրք
ընդհանուր.	88 անուն գիրք

[14] - Լ. Գ. Մինասյան. Հայ տպագիր գիրքը Իրանում 1638-2000: էջ 43-58:

Թեհրանի հայ եւ պարսիկ տպարանները որոնք հայերեն գրքեր են տպագրել

Թեհրանը թեեւ տպարան ունենալու խնդրում, իրանահայ տպարանների մեջ բռնում է երրորդ տեղը, բայց իր ունեցած տպարանների քանակի եւ տպագրած գրքերի խնդրում, բռնում է առաջին տեղը։

Թեհրանի հայկական առաջին տպարանը հիմնվել է 1890 թ., «Թեհրանահայ ուսումնասիրաց ընկերութեան» ջանքերով եւ որին, ըստ եղած դիմումների, իրենց նյութական օժանդակությունն են բերել ջավահայերը, որի պատճառով էլ նորահաստատ տպարանը անվանվել է «Ջավահայ» տպարան։

Այս տպարանը հետո անցել է Անդրեաս Բեգնազարյանի ձեռքը, որտեղ եւ 1894 թվականին տպագրվել է Իրանահայ առաջին պարբերականը՝ «Շավիղ»-ը։

Թեհրանում տպագրված մեզ ծանոթ առաջին հրատարակությունը պարսկահայ անդրանիկ պարբերական «Շավիղ» շաբաթաթերթն է, սկսված 1894 թվականի հունվարի 1-ից։ «Շավիղ»-ի վրա տպարանի անուն չի նշված, սակայն կասկածից դուրս է, որ նա տպագրվում էր «Ջավահայ» տպարանում, որն այդ ժամանակ փաստորեն անցել էր նրա արտոնատեր հրատարակիչ Անդրեաս Բեկնազարյանի ձեռքը։ Թեհրանի հաջորդ թերթի՝ «Աստղ Արեւելեան»-ի վրա արդեն Ջավահայ տպարան է նշված։ Ջավահայ տպարան է նշված նաեւ Վաղարշակ Բժշկյանի կողմից կազմված 1897 թվականի օրացույցի վրա, որից մի օրինակ գտնվում է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչյան Վանքի գրադարանում[15]։


63. ՇԱՒԻՂ

ՇԱՒԻՂ

«Շավիղ»-ի վերտառությունը (բնագիրը 22 սանտիմետր է)

Հետագայում Թեհրանում հիմնվել են այլ տպարաններ, որոնցից մի քանիսը գործել են մի որոշ շրջան եւ հետո դադարել։ Ներկայում կան հայկական մի քանի տպարաններ, ստորեւ բերում ենք դրանց, չգործող ու հայերեն գրքեր տպագրած պարսկական տպարանների ընդհանուր ցանկը[16]։

---

[15] - Ջանի Հանանյան. Թեհրանի առաջին հայկական տպարանը, Ռաֆֆի տարեգիրք. 1970թ., էջ 277-283։

[16] - Լ. Գ. Մինասյան. Հայ տպագիր գիրքը Իրանում. էջ 61-63։

Ա. Հայկական տպարաններ

1.Ալիք
2.Անի (Նախոսթին)(1956-1980)
3.Անի
4.Արաքս
5.Երազ հրատարակչություն
6.Թեհրան
7.Մոդերն (Ջադիդ)
8.Նայիրի
9.Նոր հասկեր
10.Նուրբախշ(Մասիս)(1955)
11.Ջավահայ(1890)
12.Վերածնունդ-Բոբոխ(1933-1953)
13.Փարոս (1901-1963)
14.Ֆարաբի
15.Բանվոր

Բ. Պարսկական տպարաններ

1.Ազար
2.Ալվան
3.Բանք Մելլի
4.Բոսֆոր
5.Գարուն
6.Գիթի
7.Գիլան
8.Գուտենբերգ
9.Դանեշ
10.Դաֆթարե Ֆաննի Չափ
11.Էթելաաթ
12.Էքո
13.Թաղվիմ
14.Իրանչափ
15.Խաղամաթ
16.Խայամ
17.Խոռռամ
18.Խոդքար
19.Խուշե

20.Ղազալ
21.Մազահերի
22.Մաջլես
23.Մեսբահ
24.Նեգարեսթան
25.Նեդա
26.Ռազի
27.Ռամին
28.Ռովշանայի
29.Չափքար
30.Սարվ
31.Սեքքե
32. Վահիդ
33.Օմիդ
34.Քարուն
35.Օթաղե Չափ
36.Օֆսեթ
37.Ֆարդին
38.Ֆորուհար
39. Ֆրանսուա Մալեք Քարամ

Թեհրանի հայկական տպարաններում ամենից շատ գրքեր տպագրվել են «Ալիք», «Մոդերն», «Նայիրի», «Փարոս» եւ «Ֆարաբի» տպարաններում։

Փարոսը Թեհրանի հին տպարաններից է, որի հիմքը դրվել է քսաներորդ դարի սկզբներում եւ եղել է բաժնետիրական։

Այս առթիվ 1927 թվականի Պարսկահայ Տարեցույցում (էջ 16) կարդում ենք.

«Մասնակի ձեռնարկներից պիտի հիշել ավելի քան 25 տարիներից ի վեր գոյություն ունեցող «Փարոս» ակցիոներական տպարանը, որն ուժեղ հիմքերի վրա դրված լինելով, Մաջլեսի տպարանից հետո, առաջնակարգ տեղն է բռնում մայրաքաղաքում»։

Ներկայում Թեհրանում գոյություն ունեն հետեւյալ հայկական տպարանները, որոնց համառոտ պատմականը ներկայացնում ենք ստորեւ.

1.«Ալիք» օրաթերթի տպարան

«Ալիք» օրաթերթի հիմքը թեեւ դրվել է 1931 թվականին, բայց սկզբնական տարիներում տպագրվել է «Մոդերն» եւ այլ տպարաններում, իսկ 1948 թվականին ունեցել է իր գրաշարանոցը, 1950 թ.՝ նաեւ իր տպագրական մամուլը, որով եւ տպագրել է նաեւ մեծ թվով գրքեր, մեծ մասամբ դասագրքեր։

Տպարանը քանի տեղ տեղափոխվել է, ներկայում դեռեւս մամուլը գտնվում է «Ջոմհուրի» պողոտայում, բայց խմբագրությունը, վերջին տարիներում կառուցած իր

անձնական փառավոր մի շենքի մեջ, որ գտնվում է հյուսիսային «Սոհրավարդի» պողոտայում։

2.«Արաքս» տպարան

«Արաքս» տպարանը հիմնվել է 1954 թվականին, Հրաչ Մարտիրոսյանի կողմից, սույն տպարանում բացի հայերեն գրքերից, տպագրվել են նաեւ պարսկերեն եւ օտար լեզվուներով գրքեր։

Տպարանում ընդհանուր առմամբ տպագրվում են զանազան հայտարարություններ, հարսանեկան քարտեր եւ այլ հրավիրագրեր։

Հրաչը վախճանվել է 1997թվականի հոկտ. 26-ին, որով տպարանը շարունակել է աշխատել նրա որդիների՝ Զավիկի եւ Ռուբիկի ջանքերով։

Գտնվում է պողոտա «Սաադի»-ի վրա։

3.«Մոդերն» տպարան, ներկայիս «Զադիդ»

Հիմնվել է 1922 թվականին, սկզբում եղել է բաժնետիրական, բայց մնացել է հիմնադիրներից Ֆերդինանդ Սիմոնյանին, իսկ նրա մահվանից՝ 1960 թվականից հետո, գնվել է Տաճատ Պողոսյանի կողմից, վերջինիս մահից, 1981 թվականից հետո, անցել է որդուն՝ Մարտիկ Պողոսյանին։

Հայերեն գրքերի, ինչպես եւ «Ռաֆֆի» օրացույցների տպագրության խնդրում, վստահաբար, Թեհրանի տպարանների մեջ նա բռնում է առաջին տեղը, որ աշխատում էր մինչեւ Մարտիկի կենդանության ժամանակ, երբ վախճանվեց։

Տպարանը զանազան վայրեր տեղափոխվելուց հետո, վերջապես տեղ գտավ իր սեփական տեղը, հյուսիսային «Ֆելեստին» պողոտայի Եքթա շենքում։

4.«Նայիրի» տպարան

Հիմնվել է 1954 թվականին Սամուել Սարուխանյանի կողմից, հետագայում՝ 1970 թվականին, նրան ընկերացել է Սեպուհ Ամիրխանյանը, իսկ 1986 թվականից հետո, Սարուխանյանի մահվանից հետո, Ս. Ամիրխանյանի սեփականությունն է դարձել ։

Տպարանում, բացի զանազան տպագրություններից, տպագրվել են նաեւ մեծ թվով հայերեն գրքեր, ինչպես եւ «Նայիրի» պատի եւ գրպանի օրացոյցները։

Վերջին տարիներին, երբ տպարանը վաճառվեց , սկսվեց հրատարակչական աշխատանք, տպագրելով «Մանկական մատենաշար» եւ այլ զանազան գրքեր։

Տպարանը, որ անցյալում գտնվում էր «Քալեջի Քառուղու» մոտ, այժմ միայն գրավաճառանոցն է գտնվում այդտեղ՝ «Էնղելաբ» պողոտա համար 1022, իսկ տպարանը, «Աբուզար» Սաֆի Ալիշահ պողոտայի վրա, Հովիկ Էդգարյանից («Ջեներալ Մյուզիկ» հիմնարկ) գնված եռահարկ շենքի մեջ։ Ս. Ամիրխանյանը վաճառելով տպարանն ու այդ շենքը, զբաղվեց միայն «Նայիրի» հրատարակչությունով, մինչեւ իր մահը 2011 թ., որից հետո հրատարակչության տնօրինումը անցավ նրա որդուն՝ Նարեկին։

5.«Նուրբախշ» (Մասիս)

Հիմնվել է 1955 թվականին Ղազար Ղազարյանի կեղմից, որին հետագայում ընկերացել է Վահան Կարապետյանը։ Տպարանում զանազան մանր տպագրություններից բացի, տպագրվել են նաեւ մեծ թվով հայերեն գրքեր ինչպես եւ անցյալում «Հուր», ամսագիրը եւ օտար լեզվյան գրքեր։

Վահան Կարապետյանը հետագայում բաժանվում է, իսկ Ղազարն եւս 1996 թվականի դեկտ. 18-ին կնքում է իր մահկանացուն, որով տպարանը մնում է Ղազարի որդուն՝ Վահե Ղազարյանին։ Այստեղ տպագրվել է նաեւ Կանթեղ օրացույցը։

Գտնվում է «Սիե Թիր» (նախկին Ղավամսալթանե) պողոտայի վրա «Նորահար» շենքում։

6.«Ֆարաբի»

Հիմնվել է 1975 թվականին, Գեորգ Կիրակոսյանի կողմից, գտնվում է Ամիր Աթաբակ պողոտայի վրա։

Բացի զանազան մանրումունր տպագրություններից տպագրել ու տպագրում է նաեւ մեծ թվով հայերեն գրքեր։

Ա. Հայկական տպարաններում տպագրված գրքերի վիճակագրություն

1-Ալիք տպարանում եւ նախքան տպարանի հիմնադրումը, Ալիքի հրատարակչականը լույս է ընծայել 474 գիրք (1937-2000թթ.)։

2- Անի տպարանում տպագրվել են (1954-1982թթ.) 20 անուն հայերեն գրքեր։

3- Անիվ տպարան (1944-1966թթ.), տպագրել է 6 անուն գիրք։

4-Արաքս (1972-1980թթ.) տպագրվել է 5 անուն գիրք։

5-«Երազ» հրատարակություն (1984-1985թթ.) 3 անուն գիրք։

6-Թեհրան (1918-1921թթ.) տպարան 5 անուն գիրք։

7-Մոդերն տպարան (1922-1996թթ.) տպագրվել է 372 անուն գիրք։

8-Նաիրի տպարան եւ հրատարակչութ. (1960-2000թթ.) 163 անուն գիրք։

9-«Նոր Հասկեր» (1937թ.) տպագրել է 3 անուն գիրք։

10-Նուրբախշ տպարան (1958-1984թթ.) 16 անուն գիրք։

11-Վերածնունդ (1939-1947թթ.) 7 անուն գիրք։

12-Փարոս տպարան (1904-1969թթ.) 23 անուն գիրք։

13-Ֆարաբի տպարան (1981-2000թթ.) 113 անուն գիրք։

14-Պարսկական տպարաններում (1908-2000թթ.) 188 անուն գիրք։

գումար՝ 1398 անուն գիրք

Այսպիսով Իրանում տպագրված հայ գիրքը (1638-2000 թթ.) ունի հետեւյալ պատկերը.

-Նոր Ջուղա	381
-Թավրիզ	88
-Թեհրան	1398

գումար՝ 1867

Անկասկած է, որ հիշված թվերը չեն ներկայացնում Իրանահայ հայերեն տպագրության ամբողջական պատկերը, սակայն հենց այսքանը պարզապես ներկայացնում է այն իրողությունը որ իրանահայ համայնքը մեծ ուշադրություն եւ կարեւորություն է տվել հայ գրքին։

Բացի նա Ջուղայի, Թավրիզի եւ Թեհրանի տպարաններից Աբադանու էլ աշխատել է «Կայծակյան» տպարանը։

Պարսկերեն լեզվով հայկական գրքերը Իրանում

Իրանահայ եւ իրանական առաջին տպարանի հիմնադրման ժամանակից մինչեւ 2008 թ. տպագրվել են առնվազն 178 անուն պարսկերեն գիրք հայ մշակույթի մասին, ուրեմն ընդհանուր պատկերը այսպես է լինում.

-հայերեն գրքեր 1867
-պարսկ. գրքեր 178
գումար՝ 2045

Ուրեմն 1638-2008 թթ. ընթացքում Իրանում տպագրվել են շուրջ 2045 գիրք հայերեն եւ պարսկերեն լեզուներով եթե 10% էլ նկատի ունենանք ակնաթող եւ մոռացված կամ անհայտ հրատարակությունների համար ստանում ենք 2250 գիրք։ Տպագրվող գրքերի թիվը ունի հարատեւ աճ։ Ուրեմն հրատարակված գրքերից շուրջ 90%-ը հայերեն իսկ 10%-ը պարսկերեն լեզուներով են եղել։ Հայկական գրականություն պարսկերեն լեզվով հատկապես աճ է ունեցել 1979 թվականի իրանական հեղափոխության հաղթանակից հետո, հետեւյալ աղյուսակներն պարզապես ապացուցում են այս իրողությունը։

Ըստ Արշալույս Աղայանի կազմած մատենագրության. (1638-2008թթ.)

Հայերեն

1-Արվեստ	30 անուն գիրք=1.4%			
2-Բառարան		16	անուն	0.7%
3-Բժշկական	21	անուն	1%	
4-Գրականություն	607	անուն	28.9%	
5-Դասագիրք	247	անուն	11.8%	
6-Երաժշտական	48	անուն	2.3%	
7-Իմացաբանության		75	անուն	3.6%
8-Իրավունք		20	անուն	1%
9-Կանոնագրքեր	77	անուն	3.7%	
10-Կրոնական-եկեղեցական		119	անուն	5.7%
11-Հրապարակախոսության		169	անուն	8%
12-Հուշեր-կենսագրություն	96	անուն	4.6%	
13-Պատմություն-տարելիցներ	184	անուն	8.7%	

14-տեղեկագիր-ուղեցույց 176 անուն 8.4%

15-Օրացույց 209 անուն 10%

Ընդհանուր-ա 2094 անուն 100% 97.3%

Օտարլեզու 58 անուն 2.7%

Ընդհանուր-բ 2152 անուն 100% 93.2%

մամուլ 157 6.8%

Ընդհանուր-գ 2309 անուն 100% 97.1%

իրանահայ հրատ. 69 2.9%

(այլ երկրներ.)

Ընդհանուր-դ 2378 անուն 100%

Հայ մշակույթի մասին Իրանում տպագրված գրականություն (պարսկերեն)

	Նյութ	1636-1979	1979-2008	գումար
1	Կենսագրություն (էջ)	2886	1183	4069
		%71	%29	%100
2	Բառարանագրություն(էջ)	2634	5775	8409
		31%	69%	100%
3	Ժատմագիտություն, մշակույթ(էջ)	3330	9540	12870
		26%	74%	100%
4	Գրականություն (էջ)	4836	5368	10204
		47%	53%	100%
5	Ընդհանուր (էջ)	13686	21866	35552
		38.5%	61.5%	100%

1	Տարիներ	1979-1636=343	2008-1979=29	2008-1636=372
2	տարեկան միջին (էջ)	40	754	96
3	տարեկան միջին տոկոս	40/794=	754/794	40+754=794
		%5	%95	%100
4	տարեկան միջին մշակույթի եւ պատմության մասին (էջ)	3330/343=10 տարեկան էջ	9540/29=328 տարեկան էջ	328+10=338 տարեկան էջ
		%3	%97	%100

Իրանահայ մամուլ

Հայ առաջին պարբերական մամուլը՝ «Ազդարար»-ը լույս է տեսել 1794 թվականին, Հնդկաստանի Մադրաս քաղաքում, իրանահայ Հարություն քին. Շմավոնյան Շիրազեցու ջանքերով: Ուստի աշխարհում առաջին հայերեն մամուլի հրատարակման նախաձեռնությունն ու պատիվը պատկանում է իրանահայությանը:



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՀՆՅ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

(1750 - 1824)

Հարություն քհն. Շմավոնյանը, ծնվել է Շիրազում 1750 թվականին, նախ սովորել է ծննդավայրում, ապա Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքում, ուր եւ երիտասարդ հասակում ձեռնադրվել է քահանա եւ վերադարձել Շիրազ, հովվելու իր
հոտը։Հազիվ կյանք մտած եւ հոգեւոր աշխատանքի լծված, դժբախտությունն է ունենում մեկ շաբաթվա ընթացքում՝ կորցնելու իր երկու փոքր տղաներին, որոնց վիշտը շատ խորն է ազդում նրա վրա եւ թողած տուն ու տեղ, քաշվում է Շիրազին մոտիկ «Բաբաքուհ» լեռը, պարսիկ սուֆի դերվիշների մոտ, ուր սովորում է պարսկերեն լեզուն ու գրականությունը եւ հմտանում աստվածաբանության մեջ։ Շիրազի հայերը ամեն ջանք թափում են, նրան կրկին իր ընտանիքի գիրկը վերադարձնելու ուղղությամբ, սակայն երբ տեսնում են անհնար է, ուր մնացել էր արդեն յոթը տարի, դիմում են Սբ. Ամենափրկիչ Վանքի առաջնորդին եւ 1784 թվականի մի կոնդակով, նրան ուղարկում են Մադրաս, որպես ծխատեր քահանա։ Մադրասի ժողովուրդը տեսնելով նրա մեղմ ու քաղցրաբարո բնավորությունը, որոշում է ընդմիշտ պահել նրան իրենց մոտ, ուստի Առաջնորդի թույլտվությամբ մորը, կնոջը եւ աղջկան Շիրազից Մադրաս են տանում, վերականգնելով հուսալքված քահանայի լքված օջախը։ Հարություն քահանան կարճ ժամանակից հետո, լծվում է մշակութային եռանդուն աշխատանքի, 1789 թվականին հիմնվում է իր սեփական տպարանը եւ սկսում է գրքեր տպագրել, իսկ 1794 թվականի հոկտեմբերից մինչեւ 1796 թվականը, հրատարակում է «Ազդարար» ամսագիրը, որից տպագրվում է 18 համար միայն։ «Ազդարար»-ը, իր հրատարակման 175-ամյակի առթիվ, ինչպես հիշվեց, տպագրվեց 1970 թվականին Գալուստ Գուլբենգյան հիմնարկության հայկական

մատենաշարով, երկու հատորով, նմանահանությամբ եւ ոֆսեթ եղանակով, Փարիզում։ Հարություն քին. Շմավոնյանը վախճանվել է 1824 թվականին, Մադրասում եւ թաղվել Սբ. Աստվածածին եկեղեցու բակում, տապանաքարն ունի հետեւյալ արձանագրությունը.

«Որ ի սուրբ կրօնի լեալ արթուն վարուք.
Ուշիմ եւ զգօն, յամենուստ յարգեալ,
Ճարտար, խոհամիտ եւ նուրբ հանճարիւք,
Հանգեալ զծէր կեանս, կայ աստ հողացեալ,
Աստ հանգչի Տէր Յարութեան Շմաւոնեան բարեկրօն,
աւագերէց Մադրասիս հայոց, ծնեալ ի Շիրազ, վախճանեալ
յամի տեառն 1824 Ֆեվրէր 9,
ի հասակի 74 ամաց։ Քահանագործեալ աստ արթնութեամբ
զամս քառասուն[17]»։

Իրանում հրատարակված առաջին հայերեն մամուլը եղել է Թեհրանում տպագրված «Շավիղ» շաբաթաթերթերը (1894-97), սակայն երկար տարիներ ենթադրվում էր, որ առաջինը Ռաշտի «Համայնք» լրագիրն էր (1880) բժիշկ Ալեքսանդր Աթաբեկյանի խմբագրությամբ։ Իրանահայ անվանի բանասերներ հանգուցյալ Ջանի Հանանյանի եւ Լեւոն Մինասյանի մանրակրկիտ ուսումնասիրությամբ[18] հետագայում պարզվեց, որ «Համայնքը» տպագրվել էր Ժնեւում Բժիշկ Ալեքսանդր Աթաբեկյանի միջոցով, երբ նա այնտեղ էր բնակվում, իսկ Ռաշտ փոխադրվելուց հետո այն շարունակվել է հրատարակվել Ժնեւում, ուստի չի գտնվել այդ լրագրից, որը տպագրված լինի Ռաշտում։ Այս թյուրիմացությունը մեծ հավանականությամբ ստեղծվել էր Գարեգին Լեւոնյանի կողմից հրատարակված «Հայոց Պարբերական մամուլը, Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչեւ մեր օրերը (1794-1934)[19]» գրքում ոչ փաստացի հայտարարությամբ, մանավանդ, որ հետագայում իր հրատարակած մյուս աշխատությո[20]ւնում հեղինակը խոստովանել է, որ անձամբ չի տեսել «Համայնք» լրագրի որեւէ համար, ուստի չի կարող դրա իսկությունը հաստատել։ Ցավոք մյուս գրողներն էլ հետեւելով Գարեգին Լեւոնյանին իրենց հոդվածներում եւ աշխատություններում կրկնել եւ ընդօրինակել են այդ անճշտությունը։ Հետաքրքրական է որ «Ղարադաղ» թերթում արդեն 1913 ովականին

---

[17] - «Նոր Ազդարար» Կալկաթա. Ավ. քին. Եդգարյան. 1953թ., համար 9-11 էջ 27։
Լ. Գ. Մինասյան. Իրանհայ պարբերական մամուլը 1894-1994. Նոր Ջուղա, 1994թ., էջ 14-15։
[18] - Ջանի Հանանյան. «Թեհրանի առաջին հայկական տպարանը եւ իրանահայ անդրանիկ պարբերականը». Ռաֆֆի տարեգիրք. հ. գ., 1970թ. էջ 277-290։
Լ. Գ. Մինասյան. «Իրանահայ պարբերական մամուլը 1894-1994թթ.». Նոր Ջուղա, 1994թ., էջ 16-21։ Նաեւ նրա զանազան հոդվածները, օրինակ Ալիք, 1984թ., 25 հունիս, եւ Ալիք, 1985թ., 29-31, եւ այլն։
[19] - Գ. Լեւոնյան. նշվ. աշխ., Երեւան, 1934թ.։
[20] - Գ. Լեւոնյան. «Հայ գիրքը եւ տպագրության արվեստը». Երեւան, 1946, էջ 239-240։

անդրադարձ էր եղել «Շավիղի» մասին, որպես իրանահայ «անդրանիկ օրգանը»[21]: Իրանահայ Մամուլի մատենագիտության մասին մինչ այս հրատարակվել են զանազան աշխատություններ. բերենք մի քանի օրինակ.

-Գրիգորիս վրդ. Գալեմքյարյան. «Պատմություն հայ լրագրության». Վիեննա, հ. Ա, 1893թ.:

-Գարեգին Լեւոնյան. «Հայ պարբերական մամուլը». Ալեքսանդրապոլ, 1884թ., եւ Երեւան, 1934թ.:

-Հովհաննես Պետրոսյան. «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա». 3 հատորով (1956, 1957, 1954 Երեւան):

-Ամալիա Կիրակոսյան. «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն». Երեւան, 1970թ.:

-Մանուել Բաբլոյան. «Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980». Երեւան, 1986թ.:

-Հովակ Ստեփանյան. «Իրանահայ պարբերական մամուլը». Ալիք. Թեհրան, մարտի 22: (ներկայացվել է 37 մամուլ սրա միակ աղբյուրն է եղել Գ. Լեւոնյանի աշխատան քը):

-Անհայտ հեղինակ. Իրանահայ մամուլի ցանկ. Ալիք. 1944թ., հոկտ. 20: (ներկայացվում է 43 անուն):

-Շավասպ Պետրոսյան. «Իրանահայ մամուլը, սկզբից մինչեւ մեր օրերը». Ալիք. Թեհրան, 1976թ., սեպտ. 4-16:

-Տաճատ Պողոսյան. «Կարեւոր ճշտումներ եւ հավելումներ» (Շավասպի հոդվածի նկատմամբ). Ալիք. 1976թ., հոկտ. 21-նոյ. 6:

-Լ. Գ. Մինասյան. «Իրանհայ պարբերական մամուլը» որը գտնվում է է հեղինակի «Մոդերն տպարանը եւ իր տպագրած գրքերը» աշխատության մեջ. Նոր Ջուղա 1984 էջ 95-106, ներկայացվել են 66 տպագիր եւ 51 մեքենագիր եւ ձեռագիր մամուլ, ընդամենը 117:

-Ժիրայր Դանիելյան. «Սփյուռքահայ նոր պարբերական մամուլը 1967-1980թթ.». Հայկազյան հայագիտական հանդես. համար 8-9, Բեյրութ, 1980 եւ 1981 թ.

-راهنمای مطبوعات ارمنی در ایران و جهان. ادوارد گلبنگیان. ترجمه شد. ماری اوختنس. تهران: نشر آلیک، 34701 (1968) . 28 نشریه معرفی

-Լ. Գ. Մինասյան. «Իրանհայ պարբերական մամուլը 1894-1994». Ն. Ջ. 1994 թ., ներկայացվել են 75 տպագիր եւ 78 մեքենագիր եւ ձեռագիր մամուլ, ընդամենը 153

:-اسماعیل رایین. ایرانیان ارمنی. تهران: 1356، چاپ دوم. معرفی59 ن شریه.-محمد صدر هاشمی. تاریخ جراید و مجلات ایران. اصفهان: 1363، 4 جلد، چاپ

دوم.-ژانت لازاریان. دانشنامه ایرانیان ارمنی. تهران: 2003(1384) شریه.چاپ اول. 1388 (2009) چاپ دوم. معرفی 81 ن

[21] - «Ղարադաղ». համար 3-4, էջ 36:

-Էդ. Բաղդասարյան. Ակնարկ իրանահայ համայնքի պատմության. Թեհրան, 2002թ., էջ 63-70, ներկայացվել է 30 անուն մամուլ։

-Հ. Փահլեւանյան. Իրանահայ մամուլի ժամանակագրական ցուցակ (1894-1979) «Իրանահայ համայնքը». Երեւան, 1989թ., էջ 302-310։ Ներկայացվել է 73 տպագիր մամուլ։

-Էդիկ Բաղդասարյան. «Թեհրանի հայկական մամուլը». Թեհրանահայ գաղութի պատմություն. Թեհրան, 2002թ., ներկայացվել է 55 տպագիր եւ 33 ձեռագիր եւ մեքենագիր մամուլ, ընդամենը 88 (միայն Թեհրան[22]

:(- ادیک باغداساریان. نگاهی به تاریخ ارمنیان تهران. تهران: 1380. معرفی 65+79 نشریه، کلا

[22] **- ادیک باغداساریان. نگاهی به تاریخ ارمنیان تهران. تهران: 1380. معرفی 65+79 نشریه، کلا 144.**

Սույն աշխատության այս բաժնում աշխատել ենք ներկայացնել ամենաարդիական եւ ճշգրիտ ցանկը։

Իրանահայ մամուլը 1894-2012 թթ.

Իրանահայ գաղութում առաջին հրատարակությունը եղել է «Սաղմոսարանը», որը լույս է տեսել 1638 թ. Նոր Ջուղայում[23]: Ինքնահնար եւ ինքնաշեն տպագրական մեքենայով (որը ստեղծվեց Խաչատուր Կեսարացու ջանքերով 1636-1638[24] թթ.): Այսպիսով, առաջին տպագրական մամուլի ստեղծումն ու տպագրված գիրքը Իրանում եւ Միջին Արեւելքում վերագրվում է հայերին եւ մասնավորապես իրանահայերին[25]: Իրանահայ առաջին տպագրված գրքի եւ տպագրության թվականի մասին շփոթել են Գարեգին Լեւոնյանը[26] եւ Հ. Հ. Մարտիրոսյանը[27]: Նախորդ գլուխներում արդեն հիշատակված Թեհրանահայ ուսումնասիրաց ընկերությունը (հիմնադիրներ՝ Մ. Մարգարյան, Հ. Գասպարյան եւ Կ. Բազիրկանյան), որը ամենաուշը հիմնադրվել էր 1870թ., ինչպես նշել ենք նրանց ջանքերով հիմնադրվեց Հայկազյան դպրոցը: Նրանք կրթական այս գործունեությունը լրացնելու նպատակով որոշում են Թեհրանում հիմնել մի հայկական տպարան եւ այդ կապակցությամբ Միքայել Մարգարյանը նամակագրություն է սկսում Ջավայի հայոց հետ: Նախքան 1888 թ. բանակցությունները շարունակվում են Ջավայի հայ համայնքում, Թեհրանում հայկական տպարան հիմնելու օգտին լինելիք նպաստի համար, որի քանակն էլ 1000 գիլդր (շուրջ 275 թուման) էր որոշվել[28]: Այսպիսով նրանց նյութական օժանդակությամբ հավանաբար 1890 թվականին[29] (սույն թվականը անշուշտ 1888 թվականից հետո եւ 1894թ. առաջ է եղել) հիմնվում է Թեհրանի առաջին՝ Ջավահայ տպարանը: Իրանահայ առաջին թերթը, «Շավիղը» լույս է տեսել հենց այս տպարանում: Նույն տպարանում է տպագրվել նաեւ «Աստղ արեւելյան» շաբաթաթերթը:

Այնուհետեւ մինչեւ 20-րդ դարի երկրորդ կեսը Թեհրանում հիմնվում են հայկական այլ տպարաններ. Փարոս (1901-1963), Մոդերն (ներկայիս Ջաղիդ 1922-ից), Վերածնունդ (Բոբոխ, 1933-1953), Իրանչափ (1942-1956), Ալվան (1943-1952), Ալիք (1950), Նուրբախշ (Մասիս, 1955), Անի (1956-1980), այժմ հայկական չէ եւ վերանվանվել է Նախոսթին, Արաքս (1955), Նաիրի (1954), Ֆարաբի (1975) եւ մի շարք այլ տպարաններ, որոնց հիմանդրման ստույգ տարեթիվը անորոշ է (Անիվ, Բոսֆոր, Գարուն, Գուտենբերգ, Գրոհ, Թեհրան, Խայամ, Ջափքար, Ռազի, Ռոշանայի, Ֆրանսուա Մալեք Քարամ)[30]:

---

[23] - Լ.Գ. Մինասյան. Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը. Ն. Ջուղա, 1972թ.,էջ 17:

[24] - ادیک باغداساریان(گرمانیک) . نگرشی بر چاپ ارمنی. آراکس. شماره 67-68، ص 3.

[25] - Նույն տեղում:

[26] - Գ. Լեւոնյան. Հայ գիրքը եւ տպագրության արվեստը. Երեւան, 1958թ., էջ 84:

[27] - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ□, հ.8, էջ 267:

[28] - Ռաֆֆի տարեգիրք. 1970թ., էջ 277-283:

[29] - Լ. Գ. Մինասյան. Մոդերն տպարանը եւ իր տպագրած գրքերը 1922-1982թթ., Ն. Ջուղա, 1984, էջ 14:

[30] - Նույն տեղում. էջ 13-14:

Թեհրանում բազմաթիվ չեն հայկական հրատարակչությունները: Որպես հրատարակիչ աշխատել են Ալիք թերթի հրատարակչությունը, եւ Նաիրին (տպարան եւ հրատարակչություն): Թեհրանի տպարանները ներկայումս օժտված են համակարգչային համակարգերով, այսպիսով այժմ հնարավոր է հայկական տպագրություններ ձեւակերպել մեծ թվով հայկական եւ պարսկական տպարաններում: Վերջին տարիներին Թեհրանում իրենց աշխատանքն են սկսել հայերեն համակարգչային գրաշարության հիմնարկներ (այժմ երեք հիմնարկություն):

Ինչպես նշեցինք, իրանահայ առաջին տպագիր թերթը Թեհրանի, «Ջավահայ» տպարանում տպագրված, «Շավիղ» շաբաթաթերթն է, որը լույս է տեսել 1894-1897 թթ.: Ստորեւ ներկայացվում են Իրանում տպագրված պարբերական մամուլը, նրա բովանդակության բնույթը, հրատարակման թվականը եւ խմբագիրը ըստ ժամանակագրական կարգի.[31]

1. Շավիղ- Ազգային, գրական եւ քաղաքական շաբաթաթերթ (1894-1897թթ.). Անդրեաս Բեկնազարյան (ա), Հ. Մասեհյան (1894թ.), Վրթանես Փափազյան (խ.):[32]

2. Աստղ արեւելյան- Ազգային, գրական եւ քաղաքական շաբաթաթերթ, 1896- Գելոֆյանց Սոկրատ (խ.):
3. Արշալույս- Երկշաբաթաթերթ, 1912թ., Արսեն Միքայելյան (ա.), Զորա Սագինյան, Հ. Հովհաննիսյան (խ.):
4. Առավոտ- Շաբաթաթերթ, 1919-1920թթ., Համբարձում Բազիլ (ա.), Զորա Սագինյան, Հ. Հովհաննիսյան (խ.):
5. Իրանի աշխատավոր- Շաբաթաթերթ, 1920-1921թթ., Վահան Մեսրոպյան
6. (ա.):Իրանի առավոտ- Շաբաթաթերթ, 1919թ. [33]:

---

[31] - Սույն ցանկը պատրաստելիս օգտագործել ենք հետեւյալ աղբյուրները, աշխատելով լրացնել եւ ուղղել նրա պակասն ու վրիպումները.
- Ռաֆֆի տարեգիրք. 1970թ., էջ 277-290:
- Լ. Գ. Մինասյան. Իրանահայ պարբերական մամուլը 1894-1994, Ն.Զուղա, 1944թ.:
- Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ..., հ.8, էջ 267-268:
- Հ. Փահլեւանյան. Իրանահայ համայնքը. Երեւան, 1989թ., էջ 302-310:
- Ռաֆֆի տարեգիրք. 1971թ., էջ 227-240:
- Մ. Բաբլոյան. Հայ պարբերական մամուլը - 1794-1980. Երեվան, 1986թ.:
- Ալիք. 1994թ., մարտի 5, 6, 8, 10, 12, 14, 16, 1993թ., օգոստոսի 22, մայիսի 5:
- Արաքս. 1993թ., նոյեմբեր-դեկտեմբեր (թիվ 61):

[32] - ա - արտոնատեր, խ - խմբագիր:

[33] - Լ. Մինասյանը չի հիշատակել այս թերթը, Էսմայիլ Ռայինը նշանակել է, սակայն 1918թ., Բաբլոյանը 1919թ. կասկածով է նշել:

7. Բոբոխ- Ազգային-հասարակական, սոցիալ-դեմոկրատական, երգիծազավեշտական երկշաբաթաթերթ, ապա շաբաթաթերթ, 1920-1942թթ., Արմենակ Աղայան (ա), Հայկ Գարգաշ (ա. եւ խ.), համարվում է իրանահայ առաջին երգիծաթերթը:
8. Հորիզոն- Հասարակական եւ աշխատավորական շաբաթաթերթ, 1920թ., Հակոբ Հովհաննիսյան (ա.):

9. Ռանչբար Իրանի- Հասարակական աշխատավորական, 1921-1924թթ., «Իրանի աշխատավոր», պարսկերեն թարգմանություն, Վահան Մեսոպյան:
10. Նոր կյանք- Քաղաքական, հասարակական եւ գրական շաբաթաթերթ, հետագայում՝ եռօրյա, Ստ. Խանբաբյան (ա.), Վարդան Հովհաննիսյան, Օննիկ Մխիթարյան (խ.) (առաջին համարը՝ 1922):
11. Բանվոր - Հասարակական-քաղաքական եւ գրական շաբաթաթերթ, 1923-1925թթ. Ծերուն Գինոսյան (ա.), Ղազար Սիմոնյան (խմբագրական մարմնի գլխավոր խմբագիր):
12. Մեհյան- Շաբաթաթերթ, 1924թ., Ավետիս Եղիայան (խ.):
13. Նոր պատգամ- Գրական-գեղարվեստական ամսագիր, «Միտք» միության հրատարակություն, Հ.Հովհաննիսյան (ա.), Մ.Ղարաբեգյան (խ.):
14. Ռանչպար- Հասարակական, քաղաքական, գրական շաբաթաթերթ, հետագայում՝ եռօրյա, 1924 թ.,Ա. Եղիայան (խ.):
15. Գաղափար- Հասարակական, քաղաքական, գրական շաբաթաթերթ, հետագայում՝ եռօրյա: 1925-1927թթ.: Արշակ Ղազարյան (խ.), Ա. Բեջանյան (ա.):
16. Նոր գաղափար- Տարեգիրք, լույս է տեսել մեկ գիրք (1926թ.):
17. Պարսկահայ տարեցույց- Տարեգիրք, 1927թ., 1929 եւ 1930թթ., Հայկ Գարգաշ (խ.):
18. Նոր խոսք- Քաղաքական, հասարակական, գրական եռօրյա, Ս. Սիմոնյան (խ.), 8-րդ համարից սկսած մեկ էջը՝ պարսկերեն:

19. Վերածնունդ- Քաղաքական, հասարակական, գրական օրաթերթ, 1930-1953 թթ., Հայկ Գարագաշ (ա. խ.) մինչեւ 1941թ. շաբաթաթերթ, ապա եռօրյա, 1943թ. օրաթերթ, 1947թ. եւ 1948թ., 1951 եւ 1952թթ. ունեցել է բացառիկ համարներ 29 նոյեմբերին նվիրված Սով. Հայաստանի 27-րդ, 28-րդ, 31-րդ եւ 32-րդ տարեդարձին:

20. Ալիք-Քաղաքական-հասարակական եւ գրական-գեղարվեստական շաբաթաթերթ (1931-1934թթ.), ապա երկօրյա (1935-1940թթ.), ապա օրաթերթ (1941-ից հետո):
21. Արուսյակ- Քաղաքական-հասարակական, գրական, տնտեսական եւ իրանագիտական երկօրյա, ապա օրաթերթ, 1935-1936թթ., Արտաշես Նազարյան (ա. խ.):
22. Արուսյակ- Քաղաքական-հասարակական, գրական, գիտական անկախ օրաթերթ, 1935-1936թթ., Արտաշես Նազարյան (ա. խ.):
23. Նոր հասկեր- Մանկապատանեկան երկշաբաթաթերթ, 1935-1936 թթ., Մարգարիտ Սարվարյան (ա. խ.), Մուշեղ Սարվարյան (խ.):
24. Նոր էջ- Գրականության տարեկան պարբերագիրք, 1935-1975թթ., եւ 1994, Զորայր Միրզայան, Արշավիր Մկրտչյան, Գ. Խանենց եւ ուրիշներ:
25. Նավասարդ- Գրական, գիտական երկամսյա հանդես. 1937-1939 թթ., Մ. Մկրտչյան (հրատարակիչ), Հ. Թադեոսյան (խ.), Տաճատ Պողոսյան (խ.):
26. Բոբոխ պատանեկան- Երկշաբաթաթերթ, 1940-1943թթ., Հայկ Գարգաշ:
27. Նոր աղբյուր- Մանկապատանեկան ամսագիր, 1942-1945թթ., Անդրե Տեր-Օհանյան (խ.):
28. Լույս- Գրական-գիտական երկամսյա հանդես, 1943-1945թթ., Հ. Թադեոսյան (խ.), Հ. Գրիգորյան (խ.), Տ.Պողոսյան (խ.):

29. Ցախավել- Երգիծական, պատկերազարդ երկշաբաթաթերթ, 1943-1958թթ., Եր. Բազեն Միրզոյան (խ.):
30. Ցախավել, երգիծական ժողովածու, Թեհրան 1943-1944: խմբ. Երվանդ Բազեն:

31. Մշակույթ- Հայ մշակութային միության տեղեկագիր, 1944թ., ընդամենը մեկ համար 12 էջով:
32. Գարուն- Հայ պատանեկան մշակութային միության հրատարակություն, 1945թ., ընդամենը երկու համար:

33. Աշխատանք- Քաղաքական, հասարակական եւ գրական եռօրյա, ապա՝ օրաթերթ, 1946-1947թթ., Գ.Հակոբյան (ա.):
34. Գիտություն եւ արվեստ- Հայ համալսարանականների ընդհանուր միության հրատարակություն, 1946թ., մեկ համար:
35. Ազդարար ճշմարտության- Հոգեվոր պարբերաթերթ ամսագիր. Ադվենտիստ եկեղեցու հրատարակություն, 1947թ., Հ. Տ. Գրիգորյան (խ.), երեք համար:
36. Արփի- Գրական, հասարակական ամսագիր, 1949-1955թթ., Հովսեփ Թադեոսյան (խ.).
37. Արփի, մանկական Արփի հավելված, Թեհրան, 1950-1953::

38. Արմենուհի- Գրական, պատմագիտական եւ արվեստի հանդես, 1949-1955թթ., Անդրե Տեր-Օհանյան (ա.):
39. Լուսաբեր- Մանկապատանեկան ամսագիր, 1949-1971թթ., Աշոտ Մուրադխանյան:
40. Էրոս- Գրական ժողովածու, 1950թ., Նորայր Ստեփանյան (ա. խ.), մեկ համար:

41. Նոր այգ– Շաբաթաթերթ, 1951-1953թթ., Ս. Սարգսյան (ա.):

42. Պահակ- Հասարակական, քաղաքական եւ գրական ամսագիր, 1951-1952թթ., Մուշեղ Մաստյան (ա. խ.):
43. Շանթ- Պարբերական հրատարակություն, Հայոց Դավթյան, Քուշեշ, Մարիամյան դպրոցների, ամսագիր, 1958թ., երկու համար:

44. Արարատ- Ամսագիր ՀՄԱԿ հրատարակություն 1959-1960թթ., Սեւակ Սագինյան (խ.):
45. Ալիք- ամսագիր, 1961-1963թթ.:
46. Խաչբառ- Պարբերական, 1962թ.: Վարդան Նազարյան:
47. Տեղեկատու- Իրանի հայ ավետարանական եկեղեցու գործակալության կրոնական պարբերաթերթ, 1962-1964թթ.:
48. Արմեն- Գրական, գեղարվեստական, գիտական, մարզական ամսագիր, 1963թ., երկու համար:
49. Ալիք- պատանեկան, երկշաբաթաթերթ, 1969-1978թթ., Ռ. Ստեփանյան (ա.), Ժ. Ղարիբյան (խ.):
50. Ռաֆֆի տարեգիրք- 1969, 1970, 1971թթ., գրական, պատմաբանասիրական, մշակութային հանդես, Տ. Պողոսյան (խ.):

51. Հուր- Պատմագիտական, գրական, բանասիրական եւ մշակութային ամսագիր, 1971-1974թթ., դոկտ. Գագիկ Հովակիմյան (ա. խ.), հայերեն-պարսկերեն:
52. Նոր խոսք- Շաբաթաթերթ, Հայ մշակութային կենտրոն, 1979-1980թթ., Սուրեն Համբարչյան (խ.):
53. Անդիշե վա հոնար (միտք եւ արվեստ)- Պատմական, գիտական, գրական ամսագիր, 1954թ., պարսկերենով, հայերեն բաժնի խմբագիր Հ. Խալաթյան:

54. Փյունիկ- Քաղաքական, հասարական եւ գրական շաբաթաթերթ, 1979-1933թ., Ժորժ Համբարչյան (ա. խ.):
55. Նոր Խոսք, շաբաթաթերթ, Թեհրանի Հայ Մշակութային Կազմակերպության օրգան, Թեհրան 1979-1980, Սուրեն Համբարչյան (խ.):

56. Ծիածան- Գրական-մշակութային եւ հասարակական ամսագիր, 1982-1988թթ., Ի.Ա.Մ. Միության հրատարակություն, Կ. Օհանջանյան (ա.):
57. Ծիածան, գրական, մշակութային եւ հասարակական հանդես, ԻԱՄՄիության երիտասարդական բաժին, Նոր ուղղագրությամբ:



58. Արաքս- Գրական-մշակութային, հասարակական ամսագիր 1987 թվականից առաջին երկու համարը կրել է, «Արազ» անունը, իսկ հետո, փոխվել է «Արաք»-ի: Ունի պարսկերեն բաժին, Հակոբ Գրիգորյան (խ.), ապա Ա. Եսայան (խ.):

59. Ապագա ամսագիր, Թեհրան 1995-1999, խմբագիր արտոնատեր եւ խմբագիր Էդիկ Բաղդասարյան (Գերմանիկ), հասարակական- մշակութային:

60. Ապագա հանդես , հայագիտակա-իրանագիտական եռամսյա հանդես, 2000-ից միչ այժմ, արտոնատեր եւ խմբագիր Էդիկ Բաղդասարյան (Գերմանիկ)։



61. Լույս երկշաբաթաթերթ, այժմ ամսագիր 2000-ից մինչեւ այժմ, հասարակական-մշակութային, արտոնատեր եւ խմբագիր Էդիկ Բաղդասարյան (Գերմանիկ)։

62. Պայման եռամսյա մշակութային հանդես։



63. Հանդես, եռամսյա գրական հանդես։



64. Հույս հասարակական մշակութային երկշաբաթաթերթ։ արտոնատեր Լեւոն Ահարոնյան, խմբագիր Ռ. Սաֆարյան։
65. Նայիրի տարեգիրք, 2004, 2008, 2010թթ, հրատարակիչ Սեպուհ Ամիրխանյան՝ Նայիրի հրատարակչություն, Թեհրան։
66. Ազդարար, 1904-1905, Թավրիզ, շաբաթաթերթ, համար 1-34։ Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդարան, խ. Մաշտոց վրդ. Փափազյան։

67. Հակաֆաշիստ, օրգան Ատրպատականի հակաֆաշիստ կոմիտեյի, Թավրիզ, 1943-1945, խմբագրել է կոլեգիան, անդամ էին Բաբկեն Չուգազսյանը Դավիթ Գեորգյանը եւ ուրիշներ։
68. Աղաղան, երկամսյա հանդես, «Ղարադաղի Աղաղան գյուղի հայրենակցական միության», Թավրիզ, 1912-1913։
69. Այգ, շաբաթաթերթ, 1912-1922, Թավրիզ, Հ.Յ.Դ. Ատրպատականի ԿԿ։ Խմբագիրներ՝ Մկրտում Սակհակյան եւ Գասպար Հակոբյան։

70. Առավոտ, հասարակական, քաղաքական, գրական եւ տնտեսական շաբաթաթերթ, ապա եռօրյա։ Թավրիզ, 1909-1911։ Արտ. եւ խմբ. Հայրապետ Պանիրյան։

71. Արեւելք, քաղաքական, հասարակական, գրական թերթ, եռօրյա, Թավրիզ 1944-1946, Դավիթ Գեորգյան, տպագրվել է նոր ուղղագրությամբ։
72. Արշալույս, պատանեկան շաբաթաթերթ, ՀՅԴ պատանեկան օրգան, Թավրիզ 1918-1919։
73. Գրասեր, գրական, գեղարվեստական, աշակերտական ալմանախ, Թավրիզ, 1919 անսաթերթ։ փոխարինել է Կոհակ-ին
74. Գործ, պարբերական, 1903, մեկ համար միայն, Եղիշե ծ.վրդ. Մուրադյան։
75. Զանգ, քաղաքական-տնտեսական եւ գրական շաբաթաթերթ, օրգան Ս. Դ. Հնչակյան կուսակցության, Թավրիզ 1910-1922, Ալեքսանդր Տեր Վարդանյան (խ.)։
76. Ընկեր, Նոր Ջուղայի «Բոյ Սկաութս» միության օրգան, 1920, միայն երեք համար։

77. Թավրիզի հայտարարություններ, Թավրիզ 1910-1912։ , Կարապետ եպս. Տեր Մկրտչկյան (խ.)։
78. Խոսք, գրական երկամսաթերթ, Թավրիզ, 1913թ. Հրանդ Ղարիբյան (խ.)։
79. Ղարադաղ, ամսագիր, օրգան Ղարադաղի Աղաղան գյուղի Հայրենակցական Միության, Թավրիզ 1913-1914, փոխարինել է Աղաղան հանդեսին, Վաղինակ Սարգսյան (խ.)։
80. Մինարեթ, հասարակական եւ գյուղատնտեսական շաբաթաթերթ, Թավրիզ 1919-1921, Առաքել Հարությունյան (խ.)։
81. Միտք, ազգային-հասարակական գրական եւ քաղաքական շաբաթաթերթ, Թավրիզ 1912-1914, հարատարակիչ Ալեքսանդր Տեր Վարդանյան, տնօրեն՝ Միհրան Բաղդասարյան։
82. Վերելք, Թավրիզ, 1952, շաբաթաթերթ։
83. Նոր Ջուղայի Ավետաբեր, շաբաթաթերթ, Նոր Ջուա, 1908-1911, հրատարակություն՝ «Բրիտանական եւ արտաքին Աստվածաշունչի ընկերության»։

84. Նոր Ջուղայի Լրաբեր, Նոր Ջուղա, 1905-1908, Սպահանի թեմի հրատարակություն, Բագրատ վրդ. Վարդազարյան (խ.)։
85. Պայքար, օրգան Թավրիզի Ս.Դ. Հնչակյան երիտասարդական միության, Թավրիզ 1918-1919։
86. Օտար փունջեր, թարգմանական-գրական գեղարվեստական հանդես, Թավրիզ, 1913, խմբագիր-հրատարակիչ՝ Ալեքսանդր Մելիք Վարդանյան։

Վերոնշյալ պարբերական մամուլից բացի (1-66 Թեհրան իսկ 67- 87 այլ վայրեր), Իրանում լույս են տեսել նաեւ հետեվյալ ձեռագիր կամ լուսապատճենի եղանակով բազմացված մամուլը.

1. Փարոս (1901թ.)
2. Աստղ (1920թ.)
3. Սպարտակ (1920թ.)
4. Տեղեկատու (1921-1922թթ.)
5. Պատանի (1923-1924թթ.)
6. Կայծ (1925թ.)
7. Կաթիլներ (1930թ.)
8. Ժայռ (1932-1933թթ.)
9. Լույս (1933թ.)
10. Մեղու (1933թ.)

11. Ուսանող (1934թ.)
12. Զարթոնք (1954թ.)
13. Աղբյուր (1954-1960թ.)
14. Փեթակ (1962թ.)

15. Զահակիր (1963-1990թթ.)
16. Հուր (1967թ.)
17. Ուսանողական (1970-1971թթ.)
18. Անահիտ (1972թ.)
19. Արդ (1972թ.)
20. Պ.Կ. (Պատանեկան Կազմակերպություն, 1972 թ.)
21. Մենք (1974թ.)
22. Արարատ (1977-1989թթ.)

23. Հայ համալս. ընդ. միություն (1978-1982թթ.)
24. Աշակերտ (1979-1983թթ.)



25. Հեղափոխական ճամբով (1979-1982թթ.)
26. Աշակերտի Զայն, Թեհրան, 1979։
27. Արեվելք (1980թ.)
28. Սուրհանդակ (1980-ից)
29. Կապ, 1979։
30. Այբուբեն (1981-1982թթ.)

31. Ուսուցիչ (1981-1982թթ.)

32. Տեղեկատու թեհր. հայոց թեմի (1982թ.)

33. Տեղեկատու հայկ. դպրոցի (1982-1983թթ.)
34. Տեղեկատու հայ ճարտ. (1987թ.)



35. ՊՀՄ, հասարակական քաղաքական, Թեհրան, 1997-1999
36. Խոսնակ. Իրանահայ ազգային եւ Մշակութային միություն, Թեհրան։
37. Աշխարհատեսներ, Թեհրան, պարբերաթերթ։

38. Ազդարար, Շիրազ 1981-82

39. Անահիտ, Աբադան 1968-69:
40. Անապատի Ծաղիկ, 1925 Մարաղա
41. Արաքս, շաբաթաթերթ,Գյուռջի գյուղ 1939-1940:
42. Արծվի Ատրպատականի, Թավրիզ 1938:
43. Բաղդագուշակություն, Աբադան, 1933:
44. Բյուրակն, Թավրիզ, 1936-1940:
45. Գյուղացու Ձայն, շաբաթաթերթ, Նոր Ջուղա, 1919-1920:

46. Դեպի Երկիր, Նոր Ջուղա, 1981-1986,ՀՅԴ:
47. Դուման, ամսաթերթ, 1935 Թավրիզ:
48. Դրազրկ, ամսաթերթ, Թավրիզ, 1963-1964:
49. Զարկ, շաբաթաթերթ, Փերիայի Ղարղուն գյուղ, 1929:
50. Զեյթուն, երկշաբաթաթերթ, Թավրիզ, 1938, մանկական-մարզական:
51. Զեյթուն, երկշաբաթաթերթ, Թավրիզ, 1938 աշակերտական:



52. Ժողովուրդ, շաբաթաթերթ, Նոր Ջուղա, 1979:
53. Լիլիպուտ, երկշաբաթաթերթ, Թավրիզ, 1930-1931:
54. Կամուրջ, Նոր Ջուղա, 1938-1939:
55. Կամք, Թավրիզ, 1939-1942:
56. Կյանք, կիսամսյա, Թավրիզ, 1925-1926:

57. Կոհակ, Թավրիզ, 1918
58. ։Հայ երիտասարդ, ամսագիր, Նոր Ջուղա, 1953։
59. Հայելի, Թավրիզ, 1916։
60. Հեռագիրներ, Թավրիզ, 1914։
61. Հուր, Թավրիզ, 1939, կիսամսյա։
62. Հուր, Թավրիզ, 1967, ամսաթերթ։
63. Մահակ, շաբաթաթերթ,Մարաղա, 1921։
64. Մանկագիրք, Նոր Ջուղա, 1985։
65. Մանուկ, Սպահան, 1930-1931։
66. Մարտ, Թավրիզ, 1936-1938։
67. Մեսրոպ Մաշտոց, Աբադան, 1962։
68. Մշակույթ, Ահվազ, 1979։
69. Մտրակ, Նոր Ջուղա, 1920։
70. Նշտարակ, Ռաշտ, 1893։
71. Շարժում, Թավրիզ, 1954։
72. Շարժում, Քերմանշահ, 1980։



73. Ջանքեր, Նոր Ջուղա, 1914-1919։
74. Ռեյտերի հեռագիր, Թավրիզ, 1919։
75. Սասուն, Թավրիզ, 1938։
76. Սպարտակ, Թավրիզ, 1920։



77. Վրեժ, շաբաթաթերթ, Թավրիզ, 1935։

78. Վրեժ Հայաստանի, Թավրիզ, 1935։

79. Տեղեկատու Նոր Ջուղայի, 1977-1994, Նոր Ջուղա։
80. Տեղեկատու Շահինշահրի, 1983։
81. Ռաֆֆի երիտասարդական, Թավրիզ, 1979։
82. Փայլակ-Կայծ, Թավրիզ, 1898-1903։
83. Փարոս, Թավրիզ, 1912։

ԱԼԻՔ

ՀՅԴ կուսակցության հասարակական քաղաքական, գրական-գեղարվեստական պաշտոնաթերթ։ Լույս է տեսնում 1931-ից Թեհրանում՝ նախ որպես շաբաթաթերթ, ապա կիսաշաբաթաթերթ, 1935-ի հունվարից՝ երկօրյա, այնուհետեւ՝ երեկոյան օրաթերթ։ Անդրադառնում է համաիրանական լուրերին, իրանահայ կյանքին, սփյուռքի եւ Հայաստանի իրադարձություններին, ՀՅԴ գաղափարախոսության հարցերին։ Թերթի արտոնատերերն են եղել Ա. Միքայելյանը, Ա. Բաբալյանը, Ռ. Ստեփանյանը, 1989-ից՝ Ա. Աճեմյանը, խմբագիրներ՝ Հ. Հովհաննիսյանը, Տ. Պողոսյանը, Բ. Մինասյանը, Ն. Պահլավունին, Հ. Խալաթյանը, Էդ. Երիցյանը, Ն. Էլսայանը, Սեդա դավթյանը, Դերենիկ Մելիքյան։ Այժմ ունի նաեւ կայքէջ։

ԱՅԳ

Հանրամատչելի շաբաթաթերթ, ապա՝ հասարակական-քաղաքական եռօրյա, այնուհետեւ՝ երկօրյա։ Հրատարակվել է 1912-22-ը Թավրիզում։ Խմբագիրներ՝ Մ. Սահակյան, ապա Գ. Հակոբյան։

ԱՊԱԳԱ ամսագիր

Մշակութային եւ հասարակական անկախ ամսագիր։ Առաջին համարը լույս է տեսել 1995թ. սեպտեմբերի 30-ին, Թեհրանում, սակայն երկրորդ համարից արգելվել է։ Երեք տարի ընդմիջումից հետո, երբ ռեֆորմիստականները գործի գլուխ անցան, շարունակվել է 1998-ից մինչեւ 1999 թ. դեկտեմբեր, ընդամենը 15 համար, այնուհետեւ վերածվել է հայագիտական-իրանագիտական եռամսյա հանդեսի։ Ամսագրի 2/3-ը հայերեն, իսկ 1/3-ը պարսկերեն էր տպագրվում։ Էջերը հատկացվել էին իրանահայ համայնքի եւ հայրենիքի ամենակարեւոր հարցերին, ներկայացվում էին հայ եւ

պարսիկ ժողովուրդների մշակութային արժեքները: Մեծ ազդեցություն թողեց իրանահայ համայնքում եւ զգաստացրեց թեմական իշխանություններին: Արտոնատեր եւ գլխավոր խմբագիրն էր Էդիկ Բաղդասարյանը (Էդ. Գերմանիկ): Այժմ ունի նաեւ կայքէջ:

ԱՊԱԳԱ հանդես

Հայագիտական-իրանագիտական եռամսյա հանդես, առաջին եւ երկրորդ միացյալ համարները լույս են տեսել 2000 թ. ամռանը, Թեհրանում: Հանդեսը միջազգային սպառում ունի եւ հրատարակվում է հայերեն, պարսկերեն եւ անգլերեն լեզուներով: Արտոնատեր եւ գլխավոր խմբագիրն է Էդիկ Բաղդասարյանը (Էդ. Գերմանիկ): Այժմ ունի նաեւ կայքէջ:

ԱՐԱՔՍ

Գրական, մշակութային, հասարակական ամսագիր ապա շաբաթաթերթ, սակայն հրատարակվում է պարբերական եղանակով, «Հայկական ժողովրդային շարժման» հրատարակչություն: Լույս է տեսնում ընդմիջումներով՝ 1987-ից Թեհրանում: Արտոնատեր՝ Հ. Գրիգորյան եւ Ա. Եսայան: Պաշտպանել է Խորհրդային Հայաստանի շահերը, այժմ՝ վերապահումներով պաշտպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը: Թերթի առանցքային հարցը Հայ Դատն է: Անդրադառնում է իրանական, մասամբ՝ իրանահայ կյանքին: Յուրաքանչյուր համարում 5-10 էջ հատկացվում է պարսկերեն նյութերի հրատարակմանը: Պարսիկ ընթերցողին ծանոթացնում է հայկական հարցին: Այժմ ունի նաեւ կայքէջ:

ԱՐԵՎԵԼՔ

Հասարակական-քաղաքական գրական շաբաթաթերթ, 1945-ից՝ եռօրյա: Լույս է տեսել 1944-46-ին, Թավրիզում: Հրատարակվել է «Հակաֆաշիստական թերթիկ» (1943-44թթ.), «Հակաֆաշիստական թերթ» (1944թ.), «Հակաֆաշիստ» (1943-45թթ.) անուններով: Խմբագիր՝ Դ. Գեւորգյան: Լուսաբանել է ԽՍՀՄ հայրենական մեծ պատերազմի ընթացքը, տպագրել է հաղորդագրություններ եւ ակնարկներ հայ ռազմիկների քաջագործությունների մասին, ինչպես նաեւ՝ բանաստեղծություններ, պատմվածքներ, Խորհրդային Հայաստանի տնտեսական, գիտական ու մշակութային կյանքը պատկերող նյութեր:

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Գրական-մշակութային եւ պատմագիտական ամսօրյա հանդես: Հրատարակվել է 1949-55-ը Թեհրանում: Արտոնատեր՝ Ա. Տեր Օհանյան: Խմբագրական մարմին՝ Ա. Անտոնյան (Արմանտ), Ա. Մամյան, Ս. Խաչիկյան: Տպագրել է գրական, պատմական, գիտա-առողջապահական, արվեստաբանական հոդվածներ, նաեւ՝ հայ եւ

համաշխարհային գրականության դասականների, ինչպես նաեւ իրանցի եւ իրանահայ սկսնակ գրողների գործերը: Պարբերաբար տեղեկություններ է տվել իրանահայ կրթական եւ մշակութային կյանքի մասին:

ԱՐՓԻ

Գրական, գիտական, հասարակական ամսագիր: Հրատարակվել է 1949-55-ը Թեհրանում: Հրատարկիչ խաբագիր՝ Հ. Թադեւոսյան: 1950-53-ին ունեցել է մանկական «Արփի» հավելվածը: Տպագրել է գրական-գեղարվեստական, արվեստաբանական նյութեր, թարգմանություններ եւրոպական եւ հատկապես ռուս գրականությունից, մեծ տեղ է հատկացրել խորհրդահայ գրողների ստեղծագործություններին եւ միջազգային քաղաքական նորություններին: Մանկական «Արփի» հավելվածում տպագրվել են բանաստեղծություններ, հեքիաթներ, մանկական խաղեր:

ԲՈԲՈԽ

Հասարակական, երգիծական երկշաբաթաթերթ, ապա՝ շաբաթաթերթ: Հրատարակվել է 1920-1942-ը Թեհրանում: Արտոնատեր՝ Ա. Աղասյան, խմբագիր՝ Հ. Գարագաշ: 1933-ին ունեցել է «Մանկական բոբոխ» էջը: 1930-ին «Բոբոխի» հետ լույս է տեսել «Վերածնունդ» հասարակական-քաղաքական եւ գրական անկախ շաբաթաթերթը: Խարազանել է հայ հասարակական կյանքի ստվերոտ կողմերը, պատկերել ժամանակի իրանահայ կյանքի ելեւեջները, արտացոլել հասարակական հոսանքների ձգտումներն ու տրամա-դրությունները: 1940-43-ը նրան կից հրատարակվել է երկու էջով «Բոբոխ»-ի պատանեկան եւ մանկական բաժինը:

ԳԱՂԱՓԱՐ

Հասարակական-քաղաքական գրական եռօրյա թերթ: Լույս է տեսել 1925-27-ը Թեհրանում, արտոնատեր՝ Ա. Բեգյան, խմբագիր՝ Ա. Ղազարյան: Ձգտել է սփյուռքը կապել մայր հայրենիքին, ջատագովել հայահավաքման գաղափարը՝ աջակցելով Խորհրդային Հայաստանի կառավարության միջոցառումներին: Մեծ տեղ է հատկացրել Խորհրդային Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքին: Տպագրել է գիտագրական եւ գեղարվեստական նյութեր, թարգմանություններ: Պարբերականին կից 1926-27-ը լույս է տեսել «Նոր գաղափար» եռամսյա հավելվածը:

ԶԱՆԳ

Հասարակական-քաղաքական, տնտեսական եւ գրական շաբաթաթերթ (վերջում՝ կիսաշաբաթաթերթ): Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության հրատարակություն: Լույս է տեսել 1910-22-ը Թավրիզում: Արտոնատեր՝ Ա. Պատմագրյան, հիմնադիր խմբագիր՝ Ալ. Տեր Վարդանյան, ապա՝ Վ. Մարսյան:

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակականի երկշաբաթաթերթ այժմ ամսագիր: Լույս է տեսնում 2000 թ. մարտից Թեհրանում, անդրադառնում է իրանահայ գաղութի կյանքի բոլոր հարցերին, Հայաստանի, Արցախի եւ սփյուռքի կյանքին: Արտոնատեր եւ գլխավոր խմբագիրն է Էդիկ Բաղդասարյանը (Էդ. Գերմանիկ): Այժմ ունի նաեւ կայքէջ:

ԼՈՒՍԱԲԵՐ

Մանկապատեկան, գրական, գեղարվեստական, մանկավարժական պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսել 1949-1971թթ. Թեհրանում: Արտոնատեր-խմբագիր՝ Ա. Մուրադխանյան հետագայում խմբագրել է Ա. Գառոնեն (Ա. Տեր-Բաղդասարյան): Տպագրել է հայ եւ օտար դասականների ստեղծագործություններ, արձակ եւ չափածո գործեր, պիեսներ, երգեր եւ այլն: Մատչելի նյութերով ներկայացրել է գրականության եւ արվեստի նշանավոր գործիչների կյանքն ու գործունեությունը (Կոմիտաս, Պ. Ադամյան, Ա. Իսահակյան, Ա. Զորյան եւ ուրիշներ), ծանոթացրել Հայաստանի պատմական հուշարձաններին երեխաներին ուսուցանել վարվելակերպի կանոններ:

ԾԻԱԾԱՆ

Գրական, մշակութային եւ հասարակական ամսագիր: □Իրանահայ ազգային եւ մշակութային միության□ օրգան: Հրատարակվել է 1982-88թթ. Թեհրանում: Արտոնատեր՝ Կ. Օհանջանյան: Անդրադառնում էր երկրի քաղաքական կարեւորագույն իրադարձություններին, ներկայացնում իրանահայ ազգային եւ մշակութային կյանքը, արտատպություններ կատարում հայկական մամուլից:

ՀՈՒՅՍ

Երկշաբաթաթերթ 2007-ից առ այսօր, արտոնատեր՝ Լեւոն Ահարոնյան, խմբագիր՝ Ռ. Սաֆարյան: Հասարակական-մշակութային թեմաներով հոդվածներ է տպագրում, չունի հասարակական եւ համազգային հստակ ուղղվածություն: Այժմ ունի նաեւ կայքէջ, որում չի ներկայացվում թերթի նյութերը ամբողջությամբ:

ՀՈՒՐ

Գրական, գիտական եւ հասարակական ամսագիր: Լույս է տեսել 1971-74 թթ. Թեհրանում, հայերեն եւ պարսկերեն: Խմբագիր՝ Գ. Հովակիմյան: Տպագրել է հայ եւ պարսիկ ժողովուրդների պատմական կապերն ու փոխհարաբերությունները լուսաբանող հոդվածներ, ուսումնասիրու-թյուններ, բանասիրական գործեր: Ներկայացրել է իրանահայ մշակութային կյանքը, պարսիկ ընթերցողին ծանոթացրել դասական եւ ժամանակակից հայ գրողների ստեղծագործություններին: Ամսագրում

տեղ են գտել նաեւ գիտական, մատենագիտական, մանկավարժական ուսումնասիրություններ։

ՄԻՏՔ

Հասարակական-քաղաքական, գրական շաբաթաթերթ։ Հրատարակվել է 1912-14թթ. Թավրիզում։ Տնօրեն՝ Մ. Բաղդասարյան, խմբագիր-հրատարակիչ՝ Ալ. Տեր Վարդանյան։ Անդրադարձել է իրանահայ գաղութի կյանքին, Հայաստանի եւ հայ ժողովրդի պատմական ճակատագրին, տպագրել իրանահայ գրողների ստեղծագործություններ, գրախոսականներ, մշակութային լուրեր։

ՆՈՐ ԱՂԲՅՈՒՐ

Մանկապատանեկան ամսագիր։ Հրատարակվել է ընդմիջումներով՝ 1942-48թթ. Թեհրանում (1944-ին լույս չի տեսել)։ Խմբագիր՝ Ա. Տեր Օհանյան։ Մեծ ուշադրություն է դարձրել իրանահայ երիտասարդության կրթության, բարոյական եւ գեղագիտական դաստիարակության հարցերին։ Տպագրել է իրանահայ գրողների եւ համաշխարհային (թարգմանաբար) գրականության դասականների գործերի։ Բնագիտությանը, արվեստի ու պատմությանը նվիրված հոդվածներ։

ՆՈՐ ԷՋ

Գրական ժողովածու։ Լույս է տեսել 1935-43թթ., 1953-78թթ. Թեհրանում՝ իրանահայ երիտասարդ ստեղծագործողների նախաձեռնությամբ։ Խմբագիրներ՝ Զ. Միրզոյան, Գ. Խանենց։ Տպագրել է իրանահայ արձակագիրների ու բանաստեղծների ստեղծագործությունները։ Լույս է տեսել 24-րդ համարը Երեւանում։

ՆՈՐ ԽՈՍՔ

Հասարակական-քաղաքական շաբաթաթերթ, Թեհրանի «Հայ մշակութային կենտրոնի» օրգան։ Լույս է տեսել 1979-80թթ. Թեհրանում, խմբագիր Սուրեն Համբարչյան։

ՀԱՅՐԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորագիրը ծանոթացրել է Խորհրդային Հայաստանի գրականության ու մշակույթի նորություններին։ Թարգմանաբար տպագրել է նաեւ ռուս եւ եվրոպացի գրողների գործերը։

ՆՈՐ ԿՅԱՆՔ

Հասարակական-քաղաքական եւ գրական շաբաթաթերթ, հետագայում՝ եռօրյա։ Հրատարակվել է 1922-27թթ. Թեհրանում։ Արտոնատեր՝ Ստ. Խանբաբյան, ապա՝ Վ. Հովհաննիսյան, խմբագիր Օ. Մխիթարյան («Ֆենիքս»)։

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԼՐԱԲԵՐ

Ամսաթերթ: Նոր Ջուղայի ազգային հոգաբարձության հրատարակություն: Լույս է տեսել 1904-08թթ. Նոր Ջուղայում: Խմբագիր՝ Ի. Վարդազարյան: Տպագրել է հոգաբարձության եւ առաջնորդարանի տեղեկագրերն ու բարեգործական հաստատությունների գործունեության վերաբերյալ: Ծանոթացրել է Պարսկաստանի եւ Հնդկաստանի հայկական գաղթավայրերի կյանքին, տպագրել պասրկահայ գրողների ստեղծագործություններ, ռուս եւ եվրոպական գրականության նմուշներ:

ՇԱՎԻՂ

Գրական եւ քաղաքական շաբաթաթերթ: Իրանահայ առաջին պարբերականը: Հրատարակվել է 1894-97թթ. Թեհրանում: Արտոնատեր ու հրատարակիչ (նաեւ անվանական խմբագիր) Ա. Բեկնազարյան: Խմբագիրներ՝ Հ. Խան Մասեյան (1894թ.), Վ. Փափազյան: Մեծ տեղ է հատկացրել իրանահայ աշխատավորության, հատկապես գյուղացիության սոցիայլ-տնտեսական, իրավական կենցաղային վիճակին, բարձրացրել լուսավորության հարցեր: Ունեցել է գրական հարուստ բաժին, թարգմանաբար ներկայացրել եվրոպական, ռուս եւ պարսիկ գրողներին:

ՊԱՀԱԿ

Քաղաքական-հասարակական եւ գրական երկօրյա թերթ, Թեհրան 1951-1952թ.: Ներկայացրել է իրանահայ հասարակական եւ քաղաքական ամենակարեւր հարսերը: Արտոնատերը Մուշեղ Մաստյան: Թերթի գործունյա աշխատակիցներից էին նաեւ Մատվեյ Պետրոսյանն ու Մ. Սարվարյանը:

ՊԱՐՍԿԱՀԱՅ ՏԱՐԵՑՈՒՅՑ

Թեհրան 1927, 1929, 1930թթ.: Խմբագիր եւ հրատարակիչ՝ իրանահայ նշանավոր հասարակական եւ մշակութային գործիչ՝ Հայկ Գարագաշ: իրանահայ համանայնքի պատմության մասին ունի շատ արժեքվոր հոդվածներ:

ՋԱՀԱԿԻՐ

Հոգեւոր, բարոյագիտական, առողջապահական եւ տեղեկատու պարբերական (ամսաթերթ): Գալստյան եկեղեցու հրատարակություն: Լույս է տեսել 1963-90թթ. Թեհրանում: Խմբագիր՝ Հ. Սալաքյան:

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Հասարակական-քաղաքական, գրական լրագիր: Լույս է տեսել 1930-53 թթ. Թեհրանում՝ տարբեր պարբերականությամբ (օրաթերթ, երկօրյա, եռօրյա եւ այլն): Խմբագիր-արտոնատեր՝ Հ. Գարագաշ: Լուսաբանել է իրանահայ համայնքի առօրյան,

հանդես է եկել հանուն նրա միասնության: Լայնորեն ներկայացրել է Խորհրդային Հայաստանի տնտեսության, գիտության ու մշակույթի առաջընթացը, սփյուռքահայության գոյատեւման նախապայման համարել սերտ կապը հայրենիքի հետ: ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի տարիներին անդրադարձել է ռազմաճակատի իրադարձություններին, հայ ռազմիկների սխրանքներին: Հետապատերազմյան շրջանում սատարել է հայրենադարձությանը: Ունեցել է գրական բաժին, ուր հայ գրողների գործերից բացի թարգմանաբար ներկայացրել է պարսկական գրականությունը: Տպագրել է նաեւ գիտության ու մշակույթի տարբեր բնագավառներին նվիրված հոդվածներ: 1930-42թթ. հրատարակել է նաեւ «Բոբոխ» հավելվածը: Իրանահայ առաջադիմական ամենաերկարակյաց մամուլն է համարվում մին այսօր:

ՐԱՖՖԻ ՏԱՐԵԳԻՐՔ

Թեհրան, 1969, 1970, 1971թթ., հրատարակիչ խմբագիր՝ Տաճատ Պողոսյան: 1971-ին հատրը լույս է տեսել 1984թ. խմբագրի դստեր՝ Արմինե Պողոսյանի կողմից, Լ. Գ. Մինասյանի խմբագրությամբ: Ունի գնահատելի արժեքվոր հոդվածներ մանավանդ իրանահայության մասին:

ՑԱԽԱՎԵԼ

Երգիծական պատկերազարդ երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1943-1944թթ. եւ 1950-1958թթ. Թեհրանում: Խմբագիր՝ Ե. Բազեն (Միրզայան): 1943-44թթ. հրատարակվել է որպես ժողովածու (1-8 համար): Խարազանել է իրանահայ կյանքի արատավոր կողմերը:

ՓՅՈՒՆԻԿ

Գրական, հասարակական-քաղաքական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1979-83թթ. Թեհրանում: Հանդես է եկել իրանական հեղափոխությանը սպառնացող ուժերի, միջազգային իմպերիալիզմի դեմ, ծանոթացրել ԽՍՀՄ քաղաքական կառուցվածքին եւ միութենական հանրապետությունների իրավունքներին: «Կռունկ խաբրիկ մը չունիս» խորագրով պատմել է Խորհրդային Հայաստանի առօրյայի մասին: Արտոնատեր՝ Ժորժ Համբարչյան, խմբագիր Հրաչ Հախվերդյան:

Ներկայումս (2012թ.) լույս են տեսնում «Ալիք» օրաթերթը, «Լույս» ամսագիրը, «Հույս» երկշաբաթաթերթը, «Արաքս» շաբաթաթերթը, «Ապագա» եռամսյա հանդեսը եւ «Պայման» պարբերականը:

Վերջին տարիներին ստեղծվել են նաեւ ինտերնետային իրանահայ թերթեր, «Իրանահայեր», «Նոր Ալիք», «Գրական կամուրջ», «Հայելի», «Համայնք», մի քանի անձնական վեբլոգեր: Ամբողջական ցանկը.

-Ալիք. օրաթերթ

-Լույս. երկշաբաթաթերթ (այժմ ամսագիր)
-Ապագա. ամսագիր (այժմ եռամսյա հանդես)
-Արաքս. ամսագիր (այժմ շաբաթաթերթ)
-Պայման. եռամսյա հանդես
-Հույս. երկշաբաթաթերթ
-Հանդես. եռամսյա հանդես
-Լուրեր Արարատից. ՀՄ. Արարատ կազմակերպության ներքին տեղեկատու
-Լրաբեր (Արտազ). տեղեկատու Թավրիզի առաջնորդարանի
-Նոր Ջուղա. տեղեկատու Սպահանի հայոց թեմի
-Տեղեկատու-նամակ. հայ ճարտարապետների եւ ճարտարագետների միություն
-Խոսնակ. Իրանահայ ազգային եւ Մշակութային միություն